ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2021 Հայաստանի
Հանրապետություն,Վանաձոր
Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2021, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: info@hcav.am
Ե/2020-27.08/ 501
27.08.2020 թ.

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարար
Սուրեն Պապիկյանին

Հարգելի պարոն նախարար,

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2020 թվականի միջոցառումների ծրագիրը և դրա կատարման ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 1287-Լ որոշումն առ 30 սեպտեմբերի 2019 թ. և ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը ու «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ծրագրի կատարումն ապահովող հետևյալ միջոցառումների իրականացման մասին՝ 2020 թ. հունվար-օգոստոս ժամանակաշրջանի համար:

19.1 Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման ապահովում
19.2 Ֆիզիկական պատրաստականության,առողջարարական և մարզական զանգվածային քարոզչություն՝ տպագիր, էլեկտրոնային և զանգվածային լրատվական միջոցներով

- Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և զանգվածային մարզական քանի՞ միջոցառում է կազմակերպվել, որտե՞ղ, ովքե՞ր են եղել մասնակիցները և որքա՞ն է եղել նրանց թիվը
- Ֆիզիկական պատրաստականության, առողջարարական և մարզական զանգվածային քարոզչության շրջանակներում քանի՞ հրապարակում է եղել և ո՞ր լրատվամիջոցներով (խնդրում եմ դրամադրել հրապարակումների հղումները և/կամ լուսապատճենները)

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՍՏԻՖ ՄԻՎ 44198-2020
«03» 09 2020 թ.

20. Ըստ բնակության վայրերի պարզ տիպի խաղահրապարակների ստեղծում

- Արդյո՞ք ստեղծվել են խաղահրապարակներ, եթե այո՝ քանի՞ խաղահրապարակ է ստեղծվել և որ բնակավայրերում, դրանցից քանիսը բակերում և քանիսը զբոսայգիներում

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե 2020 թ. հունվար-օգոստոս ամիսների ընթացքում վերը նշված գործողությունների իրականացման համար որքան ֆինանսական ռեսուրսներ են պահանջվել և ծախսվել, ինչ աղբյուրներից են ֆինանսական միջոցները ներդրվել (խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել ըստ յուրաքանչյուր գործողության, որի համար ֆինանսական միջոցներ են հատկացվել)։

Հարգանքով՝
կազմակերպության նախագահ Վրթուր Սաքունց

Կատ.՝ Մ. Թեմուրյան
mtemuryan@hcav.am
հեռ.՝ 077342268